

մը շատկեկ խմեն . իսկ ծերերը տկարացած կաղմուածքնին զօրացընելու համար պէտք է որ գինի խմեն , վասն զի գինին ծերո-նեան սուանդ տուող էալն է :

Դողջութեան կանոններուն վերջը հասած կ'ուզեմ անոնց կնիք զնել , որդեակը , իշխան բժշկաց ըսուած անուանի հոլանտայի Պոերհաւ բժշկին հըռչակաւոր խօսքը . Գլուխոր զով բանէ , որդոր դար , իորդ աղատ , ու բժիշներու էար չօք ըլլար : Այս խօսքը ինքը խոշոր զրբի մը մէջ զրեր էր ու կենդանութեանը ատեն ամենուն կ'ըսէր որ մէջը բժշկութեան զաղանիքը զրած է . մեռնելէն ետքը բացին տեսան որ ծայրէ ՚ի ծայր պարապ ձերմակ թուղթ է ան խոշոր գիրքը ու ձակատը ան խօսքը միայն զրուած է :

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՈՐԱԼՈՒՐ

Կար Գիտաբ:

Փրակաթ դիտարանին աստեղաբաշխը կարողոս յէլինէք այս հոկտեմբերի 26^{ին} կը ծանուցանէ որ իմասոդորոս Պրորսէն աստեղաբաշխը , որ Պոհէմիոյ մէջ յէնֆդէնպէրկի պարոնին առանձնական դիտարանին ուղղին է , հոկտեմբերի 22^{ին} իրիկունը նապաստակ ըսուած համաստեղութեան մէջ նոր լուսաւոր զիսաւոր մը տեսէր է , որուն լուսաւոր գէսը 1 աստիճանին աւելի կը տարածուի , և միջնակէտը հաստատուն աստղի մը կը նմանի : Պրորսէնի ըսածին նայելով այս զիսաւորս երկու պոչունի , որոնցմէ փոքրագոյնը գէպ ՚ի արեւն դարձած է : Հոկտեմբերի 23^{ին} առաւատը յէնֆդէնպէրկ ժամ 5[՝], 17[՝] 13[՝] եղած դիտողութենէ մը իմացուեցաւ զիսաւորին գիրքը , որ էր այս . ուղիղ ելք 15^{ժամ} 42[՝] 1[՝], 3 . իտորումն (հիւսիսային) 32[՝] 50[՝] 0[՝], 1 : Իրեն օ-

րական շարժմնաքն է 6' 16[՝], 6 (դրական կամ դէպ ՚ի հիւսիս) խոտորման վրայ : յէլինէք Փրակայի դիտարանէն Պրորսէնի հաշիւները կը հաստատէ , միայն թէ երկրորդ պոչը չէ կրցած տեսնել . և ինքը աս բանիս պատճառ կուտայ թէ իրեն դիտելու ատենը գիսաւորը արդէն հորիզոնին տակը ծածկուած է եղեր : յէլինէք այս ալ կ'ըսէթէ այս գիսաւորս իրեն լուսաւորութեանը պատճառաւ դիտակով գտնելը շատ դիւրին է , և թէ սուր աչքով ալ կրնայ տեսնուիլ առանց գործեաց իրեկունները հիւսիսային արևմտեան կողմը :

ԱԶԳԱՅԻՆ ԿԱՄ ՀԱՅԱԽՈՍ ԱՌԱԾԻՔ

ՀԱԼԵՎԸ մազ գառնոյ՝ չի կորպիքը , հարամը գերան էլ գառնայ՝ կը կոտրի : Համեշայ տատը գաթայ չի ուտիլ : Հաց ու պանիր , կեր ու բանիր : Չուկը ծովումը բաղար չի ըլլել : Մանկուց (ի մանկանէնէ) տատումը՝ (կոսուի) ծերուց գաւաղան այ : Մարդամիջն մարդս ըլլի , հաղար թուման պարագս ըլլի : Մենծի առածայ , պղտկի լսած : Մի ծառից համ թի կ'ըլլի , համ ֆորսըլի (հեծոնոյ) : Միօր միս այ , խաշուն (մի լուր) աչքի լիս այ : Շողոմիոր (ծծոնշ) գառը օխտը մէր (յուր) այ ծը ծել : Ով կը կարդայ , նա մարդ այ : Ով կը խաղայ , նա կը կաղայ : Ուզողի մի երեսը , չի առողի երկու (երես ու իւնայ) : Ուզող ուզբան էլ սատկի , կաշին մի իշաբեռն այ : Ում ասացի իմը դու ես , ասաց իմ դեկ դու ես : Չալ օյձը տեսնողը չալ չաթուիցը կը վախենայ : Սիրտա սուփրայ չի , ամէն տեղ բաց անեմ : Տաշած քարը գետին չի մնալ : Քաշալը գեղ գիտենայ՝ իր գլուխն կ'անի : Քօսին ովանազ անի , լաւ միրուք պտի ունենայ :